

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ԱՐՏՈՒՐ ՄՈՎԱՄԻՍՅԱՆԻ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#### 1. Անունը, ազգանունը

Արտուր Մովսիսյան

#### 2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

#### 3. Գործուղման վայրը և ժամկետները

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, ք. Համբուրգ, 2023 թվականի նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 2-ը

#### 4. Հրավիրող կողմը

Համբուրգի համալսարան

#### 5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

«Հորիզոն 2020» ԵՄ հետազոտությունների և նորարարությունների ծրագրի շրջանակում իրականացվող «NanoQIQO» թվինինգ նախագծին նվիրված աշխատանքային հանդիպմանը մասնակցելու համար

#### 6. Քննարկված թեմաները

- 1) «Nano-QIQO» թվինինգ նախագծի շրջանակում գրանցված հաջողությունները, նանոտեխնոլոգիաների ոլորտի նոր մարտահրավերները, ծրագրի շրջանակում համագործակցության շարունակականության ապահովմանն ու ընդլայնմանն առնչվող հարցեր,
- 2) «Հորիզոն Եվրոպա» ԵՄ հետազոտությունների և նորարարությունների նոր ծրագրի շրջանակում «Nano-QIQO» թվինինգ նախագիծը շարունակելու հեռանկարները, ինչպես նաև նախագծում ընդգրկված համալսարանների հետ համագործակցային նոր ծրագրեր իրականացնելու մասին հարցեր,
- 3) Նանոտեխնոլոգիաների ոլորտում համատեղ ասպիրանտական ծրագրեր իրականացնելու կարգի և պայմանների, ինչպես նաև ծրագրի ներդրման ժամկետների հետ կապված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման ընթացքում Ա. Մովսիսյանը հանդիպել է «Nano-QIQO» նախագծի կոնսորցիումի, ինչպես նաև Համբուրգի համալսարանի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են նախագծի ընթացքը, ծրագրի շրջանակում գրանցված հաջողությունները, նանոտեխնոլոգիաների ոլորտի նոր մարտահրավերները, ծրագրի շրջանակում համագործակցության շարունակականության և ընդլայնման հարցերը: Այցելել է Գիտական քաղաք, որտեղ տեղակայված են Համբուրգի համալսարանը և մի քանի առաջադեմ գիտական կազմակերպություններ, ծանոթացել է Գիտական քաղաքի կառուցվածքին և գործունեությանը: Տեղեկատվությունն օգտակար է «Ակադեմիական քաղաք» նախագծի շրջանակում այն տեղայնացնելու առումով: Տեղի է ունեցել ճանաչողական այց Եվրոպական ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազեր (XFEL) կենտրոն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Nano-QIQO» նախագծի հետագա ընթացքն ապահովելու և ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության ծրագրի շրջանակում նանոտեխնոլոգիաների և նյութագիտության գերազանցության կենտրոն հիմնադրելու նախագիծ ներկայացնելու վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը պայմանավորվել են շարունակել աշխատանքները ծրագրի ներդրման ուղղությամբ՝ «Nano-QIQO» ծրագրի ընձեռած հնարավորությունների շրջանակում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը



Արտուր Մովսիսյան

07.12.2023թ.